

ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ-ԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

05.03.2020թ.

Ողջունում եմ Ձե՛զ, հարգելի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ,
հարգելի ներկաներ

Այսօրվա մեր հավաքի նպատակն է ավելի թափանցիկ դարձնել Տեղական ինքնակառավարման մարմնի՝ համայնքապետարանի գործունեությունը և ապահովել բնակչության ներգրավվածությունը տեղական ինքնակառավարմանը: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով ներկայացնում եմ Գեղամավան համայնքի 2019 թվականի ֆինանսական տարվա հաշվետվությունը, որպեսզի ամփոփենք անցած տարվա մեր իրականացրած ծրագրերը և կատարած ծախսերը, որպեսզի մեր համայնքի յուրաքանչյուր քաղաքացի վստահ լինի, որ իր վճարած ամեն մի դրամը ծախսվել է համայնքի հիմնախնդիրների լուծման համար:

Հաշվետու՝ 2019թվականը աշխատանքների ու ծրագրերի իրականացման առումով հաջող էր: Համակարգված գործելաոճի, ճիշտ մշակված քայլերի, համայնք-բնակիչ համագործակցության շնորհիվ հնարավոր եղավ ապահովել համայնքային կյանքի բնականոն ռիթմը, միաժամանակ մշակել ռազմավարական քայլեր, զարգացման ծրագրեր առաջիկա ժամանակաշրջանի համար:

2019թ-ին համայնքային գործունեությունն իրականացվեց՝ համապատասխան Համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, ինչպես նաև համայնքի 2019թ. բյուջեին համապատասխան՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, բյուջետային հնարավորությունները և համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

Տարվա աշխատանքները և ծրագրերն իրականացվել են՝ հիմք ընդունելով համայնքի զարգացման 5-ամյա ծրագիրը, ծրագրով 2019թ-ին ներառված բաղադրիչները և համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

Անցած 2019 թվականը համայնքի համար կարելի է համարել հաջող,

Եկամուտներ

Համայնքի 2019թ. տարեկան բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 101.4 %-ով՝ պլանով նախատեսված 46 մլն. 750 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 47 մլն. 448 հազ. դրամ : Պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 37 մլն. 682 հազար, իսկ սեփական եկամուտների պլանը եղել է 8 մլն 168 հազար դրամ: Սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 107.6 %-ով և կազմել է 8 մլն 326 հազար դրամ: Չնայած համայնքի բյուջեի նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումը ընդհանուր առմամբ կատարվեց, բայց պետք է նշեմ, որ հողի հարկի հավաքագրման մակարդակը բավականին ցածր էր՝ 67.8

%, Հարկ եւ համարում նշել, որ թեպետ 2017 թվականի 56,4 %-ի համաեմատ հողի հարկի հավաքագրման ցուցանիշի աճ է գրանցվել, սակայն այն գոհացուցիչ չէ: Այս ցուցանիշի ցածր մակարդակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ պայմանավորված հանրապետությունից հողի սեփականատերերի բացակայությամբ, եղանակային անբարենպաստ պայմաններով պայմանավորված ցածր եկամտաբերությամբ, նաև տնտեսվարողների անբարեխիղճ մոտեցմամբ:

Ցածր է նաև բնակչությունից աղբահանության վճարների հավաքագրման մակարդակը:

Համայնքի յուրաքանչյուր բնակիչ պետք է գիտակցի, որ համայնքը մեր տունն է, և յուրաքանչյուրը պարտավոր է իր ներդրումը բերել ի շահ համայնքի զարգացման և բարգավաճման, հանուն բարեկեցիկ կյանքի: Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են:

2019թ. ընթացքում սեփական եկամուտների պլանը գերակատարվել է հետևյալ եկամտատեսակների գծով՝ պետական տուրքեր, վարձավճարներ և գույքահարկ, ինչը հնարավորություն տվեց ապահովել բյուջեի պլանային ցուցանիշների կատարումը::

Ծախսեր

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2019թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 80%-ով: Ընդ որում ֆոնդային բյուջեի ծախսերը կատարվել են 100 %-ով :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 79.6%-ով (պլան՝ 46 մլն. 750 հազ. դրամ, փաստացի 37 մլն. 175 հազ. դրամ): Վարչական բյուջեի ծախսային մասի գրեթե բոլոր հոդվածներից եղել են խնայողություններ: Տնտեսվել է ավելի քան 14 մլն. դրամ, որը ուղղվել է 2020 թվականի ֆոնդային բյուջե՝ ինչը հնարավորություն է տալիս 2020 թվականին ՀՀ կառավարությանը սուբվենցիոն ծրագրի հայտ ներկայացնելու:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2019 թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով.

Ապարատի պահպանման ծախսեր՝ 20 մլն. 725 հազ. դրամ, նախատեսված 22 մլն. 200 հազարի փոխարեն: Խնայողությունը կազմել է 1 մլն. 475 հազ. դրամ:

Էներգետիկ ծառայությունների ձեռքբերման ծախսեր՝ 1 մլն. 860 հազ. դրամ, նախատեսված 2 մլն. 615 հազարի փոխարեն: Խնայողությունը կազմել է 755 հազ. դրամ:

Կոմունալ ծառայություններ ՝ 1 մլն. 730 հազ. դրամ, նախատեսված 2 մլն. 20 հազարի փոխարեն: Խնայողությունը կազմել է 290 հազ. դրամ:

Տեղեկատվական, համակարգչային, կառավարչական և ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ՝ 1 մլն. 385 հազ. դրամ, նախատեսված 1 մլն. 910 հազարի փոխարեն: Խնայողությունը կազմել է 525 հազ. դրամ:

Գրասենյակային նյութեր՝ 312 հազ. դրամ նախատեսված 500 հազարի փոխարեն:

Տրանսպորտային նյութեր՝ 727 հազար դրամ, նախատեսված 1 մլն 200 հազարի փոխարեն:

Սոցիալական օգնություններ՝ 1 մլն. 365 հազ. դրամ, նախատեսված է եղել 1 մլն. 400 հազար:

Ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար ծասվել է 980 հազար դրամ: Իրականացվել է մարզպետարանի կողմից տրամադրված 370 խմ ֆրեզված ասֆալտի տեղափոխման, ինչպես նաև խճի տեղափոխման և ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

Համայնքում կառուցվել են հասարակական տրանսպորտի 2 կանգառների սպասատեղեր և շենքեր թաղամասում ճանապարհի պաշտպանիչ հենապատի շարունակությունը, որի համար ծախսվել է 1,6 մլն. դրամ:

Կապիտալ ներդրումներ են իրականացվել մարզի հրատապ ծրագրերի շրջանակներում իրականացված՝ Գեղամավան համայնքի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքների համար 4 մլն. դրամ:

2019 թվականին համայնքում իրականացվեց ևս մի կարևոր նշանակություն ունեցող ծրագիր, որը համարվում է հրաշալի օրինակ համայնք-բարերար և համայնք-բնակիչ համագործակցության: Համայնքում իրենց դռները բացեցին 2 ժամանցի կենտրոններ: Համայնքի կենտրոնի հիմնանորոգման և կահավորման համար Կանադահայ բարերար Վարուժանյանի կողմից ներդրվեց 5000 ԱՄՆ դոլար: Իսկ բազմաբնակարան շենքերի թաղամասում կառուցվեց նոր ժամանցի կենտրոն, որի համար 800 հազար դրամի շինարարական նյութեր և կահավորանք ձեռք բերվեցին համայնքի բյուջեի միջոցներով, իսկ շինարարական աշխատանքները ամբողջությամբ իրականացվեցին համայնքի բնակիչների կողմից:

Բարեկարգման աշխատանքներ են կատարվել գերեզմանատան տարածքում: Գեղամավանի պատվավոր քաղաքացի ռուսաստանաբնակ Արմեն Սիմանյանի կողմից տրամադրվեց անհրաժեշտ նյութերի միջոցով ամբողջությամբ ներկվել է գերեզմանատան ցանկապատը:

2019թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցներից 5 մլն. 200 հազար դրամի չափով ծախսեր են իրականացվել է փողոցային լուսավորության ցանցի կառուցման համար: Փողոցների գիշերային լուսավորման ծրագիրը արդեն երրորդ տարին է, որ կրում է շարունակական բնույթ: 2019 թվականին լուսավորության ցանց է անցկացվեց համայնքի գլխավոր փողոցների բաց մնացած 700 մետր հատվածում և թվով 4 նրբանցքներում՝ մոտ 1 կմ ընդհանուր երկարությամբ: Եվ այսօր վստահորեն կարող ենք ասել, որ համայնքը ավելի քան 90 %-ով ապահովված է գիշերային լուսավորման համակարգով:

Գեղամավանի համայնքապետարանի աշխատակազմում ամփոփվել է 2019թ-ի փաստաթղթաշրջանառությունը: Համաձայն աշխատակազմի կողմից տրամադրված տվյալների՝ 2019թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին համայնքի ղեկավարին է դիմել 45 քաղաքացի: Բազմաբնույթ դիմումների շարքում գերակշռող են

սոցիալական ուղղվածություն ունեցողները, որոնց, օրենքով սահմանված կարգով տրվել է սպառիչ պատասխան:

Գեղարքունիքի մարզպետարանից, գերատեսչություններից, միջազգային և տեղական կազմակերպություններից ստացվել է 360 գրություն, տեղեկատվության տրամադրման հարցում, որոնց սահմանված ժամկետում տրվել են անհրաժեշտ տեղեկատվություն և պարզաբանումներ:

Համայնքապետարանից ուղարկված գրությունների թիվը՝ 132 :

Տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Մենք խնդիր ունենք առավել համագործակցված և լայնաշերտ աշխատելու ավագանու հետ, որպեսզի կայացրած որոշումներն էլ լինեն արդյունավետ և նպաստեն համայնքային կյանքի բոլոր ոլորտների բնականոն աշխատանքին: 2018-ին համայնքի ավագանին գումարել է 7 նիստ, կայացրել է 30 որոշում:

2019 թվականին իրականացված աշխատանքները համարում եմ ևս մեկ քայլ համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ճանապարհին, համայնքը դարձնելով ավելի բարեկեցիկ և հարմարավետ:

Գեղամավան համայնքի ղեկավար՝ Վաչիկ Սաղաթելյան